

ողորմեցի բարերար եւ բազմագութ, մարդասէրն
Աստուած եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն:

Այլ եւ զերջանիկ գաղափարովդ մաղթեմ,
որք օրինակէք զգիր Հարմաց այսոցիկ, գրել զը՝
սակաւ յիշատակս այսորիկ. որպէս զի եւ դուք
միջիք գրեալ ի գիրն կենաց. ամէն [էջ 682—
684]:

[Գ]րեացի յայսմ տեղոջ եւ հարցմունքն
Գերբեայ, վասն բազում վկայութեանց, որ առեալ
է ի գիրս յայս, զի անստարակցյա լիցի: [Ե] են
հարցմունքդ Զորեքտասասն գլւ. որպէս յայս է ի
հարցիդ: Հարցմունք Գերբեայ Լուրդ-ութին եւ լուծ-
մունք Գրետուրէ, նորին հարազատի. օգնեան Յիսուս:
Վերջին տողք. «Զի առանուրէ իրեցին այլուր-
նեա սիոյ. ըւրշ-հից էւշ ար-ուրէ իր-ուրէ իր-ուրէ»
(էջ 684—703):

Ա. եւ Տ. կր վերջացնեն գլուխու. եւ այս
յաղագս այսորիկ այսպան ողլ, եւ անմիջապէս կը
յարեն Տաթեւացոյն Յիշատակարանը, տարբեր
վերինէն. «Ո՛չ ըստ բաւական բանի տուեալ (Տ.
առեալ) զուծումն» սկսած ծովլ: Ըստ կարեւոր,
պատմական արժեք ունեցող Յիշատակարան մը:
Մեր օրինակը (Հ) չունի այդ Յիշատակարանը, եւ
ատոր տեղ կը շարունակէ, + հակ որ ասեն. հայր
եւ որդի, եւ հոգի սուրբ, ողորմեա, կամ թէ Քրիս-
տոս որ խաչեցար. Առքա երկարնակացն է եւ քաղ-
կեդունականացն որք բաժանեն զանն ի մարմարն
եւ զեաչեալն մարդ սակ եւ տիկար, եւ մահկանացու
խստովանին: Այլ որ մեղ ուսուցին, Եփստոին է:
Զի սուրբ աստուածն ի յանդ հաստատեցաւ, որ-
պէս եւ փառք ի բարձունքն սկսեալ հրեշտակաց ի
ծնունդն Քրիստոսի, եւ յերրորդ սուրբ ժողովն
եղեւ կատարեալ: Եւ յառաջ կը տանի լուծ մունքը
աղամ բացատրութիւնը փառք ի բարձունս են. յե-
տոյ՝ «Վասն Էր զուրիմ աստուածն բացաւ գիտով
սաեմք», — «Վասն պաշտամանց եւ դասուց հար-
ցում», — «Վասն Էր երբեմն զփառքն եւ զնժմ-
ի միասին երգեմք, եւ երբեմն ուշո, — «Յամե-
նայն շարժական կրկին ասեմք. Վասն Էր զհարցն
երեքկին ասեմք հարցմանց պատմախաններով կը
փակուի այս մասն ալ, էջ 703—705, եւ կը կնքուի
հատորու:

ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՒ

(Ծարուակելի)



ՅՈՒԹԵԿ ՀԵՅԵՐԻՆ ԶԵՐԵԳԻՔԵՑ Ս. ՆԵՍՆԻ
ՎԱՆՈՒՑ Ի ՍԵԲԱՏԻՑ

(Ծարուակութիւն:)

41.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

1576.

ԹՈՒՂԹՄ 275 (Էջ 530): — ՄԵԺՈՒԹԻՒՆ
22×15×8 սնտ.: — ԳՐՈՒԹԻՒՆ Երկարն: — ՏՈՒՂԹ
21 տող՝ մին մի միավակ: — ՆԻՒԹ Թուղթ: — ԿԱԶՄ
կաշնալու փայտ: — ՀԱՆԴԱՄԱՆՔ բաւական մաւ: —
ՄԱՎԱՀԱԹԾԱՑ ՓԱՍՊԱՆԿ միամն սկիզբ կայ երկու
թերթ: — ԱԵՐՆԱԴԻՌՔ չկան: — ԳԻՐ բոլորքի: —
ՄԿՁԲՆԱՑԱՌ անարժէք: — ԽՈՐԱԿԻ տամն նորան-
սեն սկիզբ: — ԿԱՍԽՈՐԱՆՔ կիսուլ պատուածած:
— ԳՐՈՒՂ ՄԱՐԹԻՐՈՒ: — ՍՏԱՑՈՂ Ասոմ: — ԿԱԶՄՈՂ
Միամաս սարկաւագ: — ԺԱՄԱՆԱԿ որին (= 1025+
551—1576): — ՏՅԱՂ Սեբաստիա, զնդ հովանեաւ
Ս. Աստուածածին, Ս. Կարապետ, Ս. Լուարիք եւ Ս.
Քառասունից նկնդեցեաց: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ
էջ 527:

Մատեանս է Ա-Ե-Պ-Պ-Ա-Ն, էջք 17—156
Մատթէոս. էջք 157—247 Մարկոս. էջք 249
— 406 Ղուկաս. էջք 407—527 Յովհաննէս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. էջ 527 (Բու-
րդէ). «Փառք... արդ գրեցաւ սուրբ աւետարանս
ձեռաւք մեղաւք տկար եւ ցրուամիտ խորհրդակո-
րոյս եւ անիմաստ Մարթիրոս գրչի ի քաղաքիս Սե-
բաստիա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնէն
եւ սուրբ Լուսաւորչին եւ սուրբ Կարապետին եւ
սուրբ Քառանիցն, թվին Ու. եւ ԻԵ. արդ աղաչեմ
զամենեսեան որք հանդիպէք սմա, կարդալով կամ
աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս
ձեր զգծող սորա եւ զննաւազն մեր եւ զուուորելիսն
մեր եւ զահկաւ աշխատաւզն զՄինաս սարկաւագս
եւ դուք միշեալ լիջէք ի սրբոց ամէն:

Դարձեալ աղաչեմ զնեզ, որք հանդիպէք
սմա յիշեցէք յաղաւթս ձեր զստացող տառիս
աստուածային հաւատարիմ ծառայ Տեառն հո-
գեւանդ Աստոմն եւ բարեսէր, զիբրինն խորհելով,
զորպէսն եւ զիարդն, ծանուցեալ զստորակայիս
փափառող եղեալ աստուածային կտակիս եւ տի-
րոդ սովերիս, եւ աստուածաբուղս սեբերիս, եւ լուսանո-
րաւանդ գանձիս, կենսաձիր սեբերիս, եւ լուսանո-
րոդ սովերիս, եւ աստուածաբուղս աղսերիս, որ եւ
ծառայ Աստուածոյ Փանահ եւ Խասպէկն, զմաւա ա-
ծեալ զհրամայեալն ի սրբոց թէ երանի որ ունիցի
զաւակ ի Սիօն եւ ընտանեակ Երուսաղէմ, առեալ
զաս Յիշատակ Հոգւոյն Պատպերին, որ փոխեալ է առ-
Քրիստոս, պալաւինեալ ի քրիստոսասէր աւետա-
րանիչքն ունելով զոսա բարեխաւու: Արդ, որք
հանդիպէք այսմ աստուածային կտակիս, յիշեսջիք
ի մաքրափայլ աղաւթս ձեր զկիրակոսն եւ զՄեւաղն
եւ զՄւլացն եւ զամենայն արեան մերձակայս նորա.
եւ զնախին ծնաւզն իւրեանց զհայրն զթորոսն,
զթոռն զազարջան, եւ Աւմէտն մասնակից կեն-
դանիսն եւ զհանգուցեալն... (ԶԵՐԻՆ ԲԵՐ, էջ 529):

Եւ է սա ի գիւղս կառիւայ. յիշատակ ի դուռն
սրբյն Սարդուի զաւրավարին եւ որդւոյ նորս Մար-
տիրոսին:

42.

Ա Կ Ե Տ Ա Ր Ա Ն

?

ԹՈՒՂԹ.Բ. 266 (Եջը 532): — ՄԵԾՈՒԹԻՒՆ
21×16×6½: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՏՈՂՔ 19:
— ՍԻՆԻ թուղթ: — ԿԱԶՄ կաշեփայտ: — ՀԱՆԳԱ-
ՄԱՆԱՔ լաւ: — ՄԱԿԱՎԱԹԵԼԱՑ ՊԱՀԱՎԱՆԱԿ: չկան: —
ՎԵՐԱՎԴԻՐՔ կարմիր: — ԳԻՐ բուրգիր: — ԳՐՈՒ
Սարգիս: — ՄՏԱՑՈՂ Խըտքը: — ԺԱՄԱՆԱԿ անյայտ:
— ՏԵՂԻ Սերաստիա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ Մեպհակա-
նութիւն Ս. Սարգիս:

Մատեանս է Ա-Ե-Պ-Ր-Ա-Ն, Էջք 1 158
Մատթեոս. Էջք 159—260 Մարկոս. Էջք
261—418 Ղուկաս. Էջք 419—531 Յով-
հաննէս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. «Փառք...» որ
ետ կարողութիւն տիկար եւ տարտամ անձին իմայ
եւ սուտանուն Սարգսի որ զայս սուրբ փոխ աւետա-
րան պահանէր գրեցի եւ աւարտեցի, եւ որ յիշէ
յիշեալ լիցի իւր արբայութիւնն: Ցանկացող ե-
ղեալ սրբանէր եւ մաքրամիտ խըտքին որ ասէ թէ
ով ունիցի զաւակ... ետ զնել ասուղածայիսաւս
սուրբ աւետարանս յիշատակ իւր հոգւցն Խըտքին
եղաւը սաստպակէ? (?) իւր կողակցին նազիկին,
հաւրն Արաւանին եւ մարն Ալթունին եւ ամենայն
արեան մերձաւորաց կարդացողաց եւ լողաց եւ
ողորմիս ասացողաց, որ զամենսեան ասէք ամէն
հայր մըր»:

43.

Ա Կ Ե Տ Ա Ր Ա Ն

1578:

ԹՈՒՂԹ.Բ. 258 (Եջը 516): — ՄԵԾՈՒԹԻՒՆ
19×15×7: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՏՈՂՔ միւ-
սակը 21: — ՍԻՆԻ թուղթ: — ԿԱԶՄ կաշեփայտ: —
ՀԱՆԳԱՄԱՆՔ մաշած: — ՄԱԿԱՎԱԹԵԼԱՑ ՊԱՀԱՎԱՆԱԿ
երկերկու թերթ ստիւն ու հուն: — ՎԵՐԱՎԴԻՐՔ
կարմիր թամար: — ՄԿՁԲԱՍՄՈՒԹ նի ԼՈՒՍԱՆՑԱ-
ՉՈՐԴ.Բ բաւական միրուն: — ՄԱՄՐԱՆԿԱՐՔ շորս Աւե-
տարանիսերունը միայն կան: — ԽՈՐԱՎԱՔ չկան: —
ԿԻՍՍԵԽՈՐԱՎԱՔ շորս ճատ, բաւական միրուն: — ԴԱՏ.
ԹՈՒՂԹ.Բ Էջը 511—516: — ԳՐՈՒ Տիրասուր արեայ:
— ՏԵՂԻ Սրծէ: — ՄՏԱՑՈՂ Տեր Կոհոր — ԺԱՄԱ-
ՆԱԿ Թիլ (= 1027+551) = 1578: — ՑԻՇ: ՑԱՆԿԱԳՐՈՒ-
ԹԻՒՆՔ Էջը 505—511: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ սեպհակա-
նութիւն Ս. Սարգիս:

Մատեանս է Ա-Ե-Պ-Ր-Ա-Ն, Էջ 11 Մատ-
թէս. Էջ 185 Մարկոս. Էջ 243 Ղուկաս.
Էջ 391 Յովհաննէս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. «Փառք...» որ
ետ կարողութիւն տիկար եւ անարհեան գրչի Տիրա-
տուր սուտանուն արեցայի հասանել ի յաւարտ
սուրբ աւետարանիս, ի յերկիրն Քաջբերունու, որ

կոչի Արձէշ, ի սուրբ ուխտս Սուխար թագաւորի:
որ այժմ խառաբաստա վանք վերաձայնի, ընդ հո-
վանեաւ Արծուաբեր սուրբ Աստուածածնին, ի յա-
ռաջնորդութեան սուրբ ուխտս Մինաս եպիսկո-
պոսին եւ ի կաթողիկոսութեան Հայոց ազգիս սուրբ
աթոռոյն Էջմիածնայ Տէր Առաքելին. եւ ի թա-
գաւորութեան Տաճկաց մահմէտական ազգին ա-
րեւմտուն փայտչային սուլթան Մուրատին եւ ա-
րեւելեան փայտչային փոքր ջահ Խամայէլին, որ եր-
կուն նոր փայտչայ եղաւ յայսմիկ ժամանակիս որ
զայոց ազգս ի տայտպոսինչ պահէին. որ միմեանց
գրոհ տային թէ ի վրէդ կու գամ նա Հայոց ազգս
դողային եւ հալածական լինէին յահէ անօրինայն
թէ ինչ ափ լինի հալերս. գեռ Աստուած գիտէ
դիրջն թէ ինչ լինի: Ի թվականութեան Հայոց
Խիլէ գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ Աւետարանս
Ճեռամբ անարժան Տիրատուր սուտանուն աբե-
ղյի, ի խնդրոյ բարեմիտ եւ աստուածատէր տէր
Գրիգորին եւ իւր ծնողացն հաւրն յիտսարիկէս քա-
հանային եւ մաւրն Խաթուն փաշէն, եւ եղբարքն
իմ Յովասափին, Կիրակոսին, Զաւրիկին, Աւզոնին,
Քյուրքն իմ զիսան փաշէն, զփարէ Խան, Կողակիցն
իւր զՄարդարիտն, որդիկ իւր զկիրակոսն, Յակոբն
զՄկրտիչն, որ կարճաւրեայ փոխեցաւ առ Աս-
տուած, գուստրն իւր զՊահրստանն եւ այլ ամե-
նայն արեան մերձաւորացն ամէն: Ընդ նմին անար-
ժան Յակոբ եպիսկոպոս»:

«Սուրբ Աւետարանս յիշատակ է Գասպարին
եւ իւր կողակիցն Հահիճանին, գնեցին իւրեանց
հայալ Ընկիցն եւ դրին յիշատակ իւրեանց հոգուն
եւ ննջեցելոցն. որդւոցն Յովհաննիսին, Հանջանին,
Յուսուֆին, գստեց Եղիսաբէթին, Խղարին,
Խուտարաթին, Բակղատէին, իւր մաւրն Մուլքին:
Դարձեալ յիշեցէք զհայր իմ քանին եւ զկողակիցն
Մատանին: Դարձեալ յիշեցէք զեղբարքս իմ Խա-
չատուրն եւ Մելքոնն, զՀուրեփալին եւ իւր Քու-
րօջն Խան բակէ, Թաղոհէ, Հահիճանին, եւ այլ
ամենայն արեան մերձաւորքն եւ հաւր ննջեցեալքն
ամէն»:

44.

Ա Կ Ե Տ Ա Ր Ա Ն

1593:

ԹՈՒՂԹ.Բ. 279 (Եջը 558): — ՄԵԾՈՒԹԻՒՆ
26×18×6: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՏՈՂՔ միւ-
սակ 21 տուղթ: — ՍԻՆԻ թուղթ: — ԿԱԶՄ կաշե-
պատ փայտ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ բայբայուած: — ՄԱԿԱ-
ՎԱԹԵԼԱՑ ՊԱՀԱՎԱՆԱԿ սկզբն ու վեռջը երկերուն թերթ,
աւետարան: — ԳԻՐ բուրգիր: — ՍԿՁԲԱՍՄՈՒԹ Աւե-
տարանիսերուն սատական միրուն խարդատաներ: —
— ԼՈՒՍԱՆՑԱՐԴ.Բ ամէնին ալ պարզ: — ԽՈՐԱՎԱՔ
սկզբի տասն խորաները նոխ ներկով բայց անյաջող
արուեստով: — ԿԻՍՍԵԽՈՐԱՎԱՔ միւ մի աւետարանի
աղջն մէմէկ հատ: — ԳՐՈՒ Տիրասուր Կոհէց: — ՄՏԱ-
ՑՈՂ Բայտասար: — ԺԱՄԱՆԱԿ Ոլոր (= 1042+551)
— 1593: — ՑԻՇ: ՑԱՆԿԱԳՐՈՒԹԻՒՆ Եջ 548:

Մատեանս է Ա-Ե-Պ-Ր-Ա-Ն, Էջ 27 Մատ-
թէս. Էջ 177 Մարկոս. Էջ 271 Ղուկաս.

Հոգւոյն, հաւը Տատուրին եւ մաւը Գինէլարդին, եւ եղբարին Մուրատին եւ պապին Պայինտուրին եւ մամուն Մելքին եւ իւր որդւոյն Ողուլ Պալէ եւ ամենայն արեան մերձաւորացն սորա որ եղին յիշատակ իւրեանց հոգւոյն զսուրբ աւետարանս...»:

47.

Ա Կ Ե Տ Ա Ր Ա Ն

1619.

ԹՈՒԴԹ. 298: — ՄԵԾՈՒԹԻՒԽԻՆ 19×16×5: — ՔՐՈՒԹԻՒԽԻՆ երկսին: — 80ՎԲ մէնմի սիւնակ 19տող: — ՆԻԽԹ թուղթ: — ԿԱԶՄ կաշեպատ փայտ: — ՀԱՆԱՍՄԱՆՔ բաւական լաւ: — ՄՄԳՎԱՅՄԹԵՍԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ միայն սկզբը՝ երկու թերթ աւետարան: — Գրու սոլորգիր: — ԴԻՇ նիկողոս: — ՍՏԱՑՈՂ Արեւան և կին իւր Թաթամ: — ԿԱԶՄՈՒԿ վարպետ Պալտասար: ԺԱՄԱՆԱԿ ՌԱԿ (— 1068 + 551 = 1619): — ՏԵՂԻ ՀՐԵՇ տակապետ վանք Սեբաստիոյ:

Մատեանս է Ա-Ե-Կ-Ր-Ա-Ն, էջ 8 ա Մատթէոս. էջ 87 ա Մարկոս. էջ 137 ա Ղոկաս. էջ 229 ա Յովհաննէս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒԽԻՆՔ. էջ 298 (բառ էրէւ). «Փառք անսկղնականին հաւը եւ որդւոյ... Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուաբերութեան ՌԿԸ, ձեռամբ յոդնամեղ եւ եղկելի սուտանուն Նիկողոս արելայի ի գաւառն Սեբաստիոյ թեան առուր Հրեշտակապետի ի յառաջնորդութեան տէր ՄԼՔԱԷԺ վարդապետին, զոր տէր Յիսուս պահեցէ զնոյ յերկար ամաւք ամէն. Արդ գրեցաւ սա ի դառն եւ ի նեղ ժամանակին ի թաղաւորութեան տաճկացի ի ժամանակն սուլթան Օսմանի, զի ժամանակն չար էր եւ... Գարձեալ յիշելք ի մաքրափոյլ յաղօթու ձեր զստացող սուրբ աւետարանին զմահամեսի Արեւաշն, եւ զհայրն իւր զՎարդանն եւ զմայրն զխանումն եւ զեղբայրն իւր զՄԼՔԱՍԱՆՈՍ Սարկաւագն, որ փոխեալ է առ Քրիստոս, եւ զամուսինն զթաթամին, որ ստացաւ զսուրբ աւետարանս զայս սիրուն յիշատակ ի դուռն սուրբ Կարպակետին ի դուռն կիր վասլի աղքն ի ձեռն տէր Յակոբին...»:

48.

Ա Կ Ե Տ Ա Ր Ա Ն

1635.

ԹՈՒԴԹ. 300 (էջ 600): — ՄԵԾՈՒԹԻՒԽԻՆ 26×21×7: — ՔՐՈՒԹԻՒԽԻՆ երկսին: — ՆԻԽԹ թուղթ: — ԿԱԶՄ կաշեպատ փայտ գեղատիպ զստամուածք ներով: — ՀԱՆԱՍՄԱՆՔ լաւ պահուած: — ՎԵՐՈԱԳԻՐ կարմիր թանաբ: — ԳԻՄ բոլորգիր: — 80ՎԲ մէն մի սիւնակ 20: — ՄԿՁԲՍԱԾՈՒԹ նախորդներուն նման: — ԼՈՒՄԱՆ ՑԱԶԱՐԴՔ նոխպէս: — ՄԱՆՐԱՆԿՎԱՐ են յորմանը չան: — ԿԻՍԱԽՈՐԱՎԱՐ աւետարաններուն սկզբ մէյթէ հատ: — ԳԻՄ ՄԵԼՔԻ երեց: — ՏԵՂԻ Թաղանձն գիտ արգակ զաւար մերկին Աղուանից: — ՄՄԳՎԱՅՄԹԵՍԱՑ պաշտամուսկ սկզբն ու վեսչը երկերկու պարապ թերթ: — ՍՏԱՑՈՂ գաւալ: — ԺԱՄԱՆԱԿ ԲՇՎ (— 1084 + 551) = 1635: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹ-

ԹԻՒՆՔ էջը 263, 448 և 596—598: — ՏԵՂԱԿՈՂԻ-ԹԻՒՆ կը վերաբերի Ս. Սարգսի կ Սեբաստիա:

Մատեանս է Ա-Ե-Կ-Ր-Ա-Ն, էջը 1—160 Մատթէոս. էջը 161—263 Մարկոս. էջը 265 — 447 Ղոկաս, էջը 451—596 Յովհաննէս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒԽԻՆՔ. էջ 596. «Փառք ամենասուրբ երրորդութեան... գրեցաւ աւետարանս այս ի յերկիրս Ազվանից ի գաւառու Պիղակայ ի գեւաւը որ կոչի Թաղասեռ ընդ հովանեաւ Ա. Աստուածածնիս եւ Ս. կուսին Քրիստոսի Աստուծութիւնուն մերց վայելէ: Մանաւանդ ստացողիս Ս. Աւետարանիս, Գաւզալն որ ստացաւ զսա հալու ընչեւքն իւր. զյիշատակ իւր եւ ծնողացն իւրոց հայրն իմ Պօղոսի եւ մայրն իմ Խանումին եւ հոգեւոր որդին իմց խարազնասգեստ սրբասէր եւ բարեմիտ Մինաս քահանային եւ միւս հոգեւոր որդին իմց Խարումին որ էր փեսայ եւ գուստը իմ Մարիամին Թամամին եւ Շահումին եւ միւս գուստը իմ Խանումին որ հանդեաւ ի Քրիստոս. ձեռամբ ՄԵԼՔԻ իրիցի եւ հոգեւոր եղբօր իմ միաշունչ հեղահոգի կիրակոս քահանային որ մատեղ սկսաք եւ աւարտեցաք Ս. Աստուածածնոս ի փառու: Ի թվ. ՌԵԴԻ. իշխանութեան Շահսափուն, որ էր թագաւորեալ ի Է. ամի. ի այն ժամանակն գրուեցաւ որ Խաստամիսանն զնաց ի Վրաց տուն, գերեաց շատ նախջիր գործեաց, եկն գարձաւ գնաց ի Վան քաղաքի վերա. ոչինչ չկարաց անիլ: Գարձեալ ասեմ ԶԵՂ, ովկ հանդիպողք սմա կարդալ կամ օրինակելոյ, յիշեցէք ի մաքրափայլ ազօթս ԶԵՐ ի փառաք Քրիստոսի: Ինչ մարդ որ այս յիշատակարանս կարելամ ձեռն տայ ՅՖԼ հայրապետացն նզով իլնի...»:

Էջ 448. «Զատացողի Ս. Աւետարանիս: ՊԳԱԿԱՎԱՐ լին, հայրն իւր Պօղոսին եւ մայրն իւր Խանումին եւ գստերն իմց Մարիամին, Թամամին, Շահումին, Խանումին, որ հանգուցեալ էր ի Քրիստոս. մանաւանդ յիշատակարանս գրողի որ է Պաղտասար Սարկաւագի գպրի յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ԶԵՐ եւ գուր յիշեալ լիջիք ի Քրիստոս առատ ողբանութեան փառք յափիտեանս ամէն. Ի թվին Հայոց ՌԵԴԻ:

Էջ 263. «Զատացողիս Ս. Աւետարանիս գաւառին եւ իւր գստերն Մարիամին, Թամամին եւ միւս գուստը Խանումին որ հանգուցեալ էր ի Քրիստոս, այս յիշատակարանս ինչ մարդ որ կտրէ կամ հեղձէ ԺԲ. առաքելոց ԻՒ. մարգարէկից ՀԲ. աշակերտաց, արեամբն երկուց մարտիրոսաց եւ երջանիկ Ս. կուսանացն, խոտածարակ ձգնաւ որացն անիծ ած կենայ, նզոված իլնի»:

ԹՈՐԴՈՍ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԼՆ (Հարուանակելի):

